



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14**

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվական

**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Հարութ Թերջյանը, Արթուր Հովհաննիսյանը, Հրաչիկ Միերյանը, Մյասնիկ Պողոսյան ը, Թեհմինե Պողոսյանը, Համլետ Սահակյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նորահին Հակոբյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արայիկ Ավետիսյանը

Լսեցին

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 1-9 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՒՍԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՄԱՆՈՐՅԱ ՆՎԵՐՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 1-9 տարեկան երեխաների համար ամանորյա նվերներ ձեռք բերելու նպատակով համայնքի բյուջեից հատկացնել 960.000 / իննը հարյուր վաթսուն հազար / ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից :

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 111-Ն/

Լսեցին

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23.11.2023 ԹՎԱԿԱՆԻ N 108-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, « Նորմատիվ իրավական ակտերի մասին » ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով , Ծաղկահովիտ համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 23-ի N 108-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝  
- որոշման 1-ին կետում « դեկտեմբերի 21-ը » բառերը փոխարինել « դեկտեմբերի 19-ը » բառերով,
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 113-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 65-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի արտահերթ նիստի օրակարգը՝
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքում ամանորյա զարդարանքներով ձևավորման աշխատանքների իրականացման և տոնածառի ձեռք բերման համար գումար հատկացնելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 1-9 տարեկան երեխաների համար ամանորյա նվերներ ձեռք բերելու համար գումար հատկացնելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի համար արտաբյուջետային հաշվեհամար բացելու համաձայնություն տալու մասին
5. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 23.11.2023 թվականի N 108-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 109-Ն/

Լսեցին

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՄԱՆՈՐՅԱ ԶԱՐԴԱՐԱՆՔՆԵՐՈՎ ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՏՈՆԱԾԱՌԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքում ամանորյա զարդարանքներով ձևավորման աշխատանքների կատարման և տոնածառի ձեռք բերման նպատակով համայնքի բյուջեից հատկացնել 1.300.000 / մեկ միլիոն երեք հարյուր հազար / ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից :

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 110-Ն/

Լսեցին

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՄԱՐ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎԵՀԱՄԱՐ ԲԱՅԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԷԴԳԱՐ ՄՆՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին » ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջներով և հիմք

ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է՝










1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից համաֆինանսավորվող Ծաղկահովիտ համայնքում «Սոցիալական ծառայությունների հասանելիություն և ներառականություն» ծրագիրը իրականացնելու նպատակով արտաբյուջետային հաշվեհամար բացելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 112-Ն/

Ավագանու անդամներ

- ԱՐԾՐՈՒՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ 
- ԱՆԱՀԻՏ ԲՈՅԱԶՅԱՆ 
- ԲԱՎԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ 
- ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ 
- ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 
- ԳՈՌ ՀՈՒՆԱՆՅԱՆ 
- ԳԵՎՈՐԳ ՂԱԶԱՐՅԱՆ 
- ՄԻՇԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ 
- ԱՐՄԻՆԵ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ 

Համայնքի ղեկավար

ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ



Նիստն արձանագրեց՝ Արայիկ Ավետիսյանը

